



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Առողջապահության
Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

AUA American University
of Armenia

ԹՐՓԱՆՃԵԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ



Հայաստանում վարակիչ հիվանդությունների բռնկումներին առողջապահության առաջնային օղակի արձագանքման կարողությունների գնահատում. Քովիդ-19 փորձառությունը

Բուժհաստատությունների դիտարկում

Համառոտ զեկույց

Հունվար 2022

Հայաստանի ամերիկյան համալսարան

Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետ

Ավետիսեան Օնանեան առողջապահական ծառայությունների հետազոտման և
զարգացման կենտրոն

*Սույն զեկույցը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Այստեղ արտահայտված նյութի
բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի
ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթղթի նպատակը «Հայաստանում վարակիչ հիվանդությունների բռնկումներին առողջապահության առաջնային օղակի արձագանքման կարողությունների գնահատում. COVID-19 փորձառությունը» հետազոտության բաղադրիչներից մեկի՝ բուժհաստատությունների դիտարկման արդյունքները ներկայացնելն է:

Հետազոտությունն իրականացվել է «Աջակցություն՝ կառավարելու կորոնավիրուսային հիվանդության եւ այլ վարակիչ հիվանդությունների բռնկումները Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Կորոնավիրուսային հիվանդության և այլ վարակիչ հիվանդությունների բռնկումների կառավարմանն աջակցելու ծրագիրը գորացնում է Հայաստանի ազգային ներուժը՝ դիմագրավելու կորոնավիրուսային հիվանդության և այլ վարակիչ հիվանդությունների բռնկումներին՝ նպաստելով հանրային առողջապահական անհետաձգելի իրավիճակներին պատրաստվածության և պատասխանի ռազմավարության բարելավմանը: Ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) և իրականացվում Հայաստանի ամերիկյան համալսարանի հիմնադրամի կողմից՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համագործակցությամբ:

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանձեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի կողմից, 2021թ.-ին:

Բուժհաստատությունների դիտարկման նպատակն էր՝

- Ուսումնասիրել վարակի վերահսկման և կանխարգելման(ՎՎԿ) նպատակով ներդրված միջավայրի հարմարեցման միջոցառումները առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակի բուժհաստատություններում:
- Ուսումնասիրել ՎՎԿ վերաբերյալ ուղեցույցների, արձանագրությունների, գրավոր ընթացակարգերի և ստանդարտ գործողության ընթացակարգերի հասանելիությունը ԱԱՊ օղակի բուժհաստատություններում:
- Ուսումնասիրել ՎՎԿ ենթատեքստում բուժառուների, այցելուների և բուժանձնակազմի անվտանգության պահանջարկներն ուղղված միջոցառումները:
- Դիտարկել բուժառուների, այցելուների և բուժանձնակազմի վարքագիծը ՎՎԿ ապահովման համար:
- Ուսումնասիրել ՎՎԿ իրականացման համար անհրաժեշտ կլինիկական և ոչ կլինիկական սարքավորումների, ծառայությունների և այլ միջոցների անհրաժեշտությունը ԱԱՊ օղակի բուժհաստատություններում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության այս բաղադրիչն իրագործելու համար հանրապետությունում պատահականության սկզբունքով ընտրվել է ԱԱՊ օղակի 35 բուժհաստատություն (պոլիկլինիկաներ), որոնցից 13-ը Երևանում, 22-ը՝ մարզերում: Ընտրված բուժհաստատություններից 3-ը մասնավոր էին, իսկ 32-ը՝ պետական:

Տվյալների հավաքագրումը իրականացվել է 2021 թվականի մայիս-սեպտեմբեր ամիսներին, վարակի կանխարգելման և վերահսկման վերաբերյալ ստանդարտացված ստուգաթերթի միջոցով, որը ստեղծվել է հիմնվելով տեղական և միջազգային գիտական գրականության ուսումնասիրության վրա, նախաթեստավորվել է, ըստ այդմ վերամշակվել է և կիրառվել բուժհաստատություններում դիտարկման համար:

Յուրաքանչյուր հաստատությունում տվյալների հավաքագրումն իրականացվել է 3 բաղադրիչներով՝ ստուգաթերթի լրացում վարակի հսկողության պատասխանատուի կամ ղեկավար անձի մասնակցությամբ, կարճ ստուգաթերթի լրացում 2-ական թերապևտի կամ ընտանեկան բժշկի մասնակցությամբ, և դիտարկում ընդհանուր տարածքներում:

Հետազոտության ամփոփ տվյալները ներկայացված են ըստ հիմնական բաժինների:

1. ՎՎԿ վերաբերյալ ուղեցույցներ, արձանագրություններ, գրավոր ընթացակարգեր և ստանդարտ գործողության ընթացակարգեր

Բոլոր հաստատություններն ունեին ՎՎԿ համակարգման համար պատասխանատու անձ, և արձանագրել էին, որ առաջնորդվում են Քովիդ-19-ի վերաբերյալ ազգային ուղեցույցներով և ընթացակարգերով:

Բոլոր մասնակիցները նշել են, որ իրենց բուժհաստատությունում բժշկական թափոնների հեռացումն իրականացվում է ԱՆ կողմից հաստատված ընթացակարգով:

2. Միջավայրի վերահսկում և հարմարեցում

Պոլիկլինիկաների 93,9%-ում առկա է եղել առանձնացված հատված (մեկուսարան) Քովիդ-19-կասկածելի այցելուների համար, որոնց 94,3 %-ը՝ առանձին մուտքով:

Դիտարկված պոլիկլինիկաների 80,6 %-ում իրականացվում էր նմուշառում (Երևանին մոտ գտնվող որոշ մարզային պոլիկլինիկաներում՝ միայն արագ թեստերի

համար): Դիտարկված նմուշառման սենյակների 91,3%-ը ապահովված են եղել բնական օդափոխությամբ:

Ձեռքերի ախտահանիչ միջոցներ առկա էին բոլոր դիտարկված ընտանեկան բժիշկների սենյակներում, բոլոր պոլիկլինիկաների մուտքի մոտ, և դրանց 73,5%-ի սպասասրահներում: Պոլիկլինիկաների 73,5 %-ում սպասասրահներում կահույքը հարթ էր, ոչ ծակոտկեն և հեշտ մաքրվող: Պոլիկլինիկաների 88,6 %-ում դիտարկվել է առանց ձեռքերի հպման բացվող աղբամանների առկայություն, 76,5% պոլիկլինիկաների սպասասրահներում դիտարկվել է դիմակների համար նախատեսված աղբարկղերի առկայություն: Բոլոր պոլիկլինիկաներում նշվել է առնվազն 2 գործող սանհանգույցի առկայություն՝ բացառությամբ մեկի:

3. Այցելուների իրազեկում և անվտանգություն (վարակի վերահսկման նպատակով)

Գրեթե բոլոր պոլիկլինիկաներում տեսանելի վայրերում փակցված էին իրազեկող պաստառներ՝ ֆիզիկական հեռավորության, շնչառական հիգիենայի, ձեռքերի հիգիենայի, ախտանշանների դեպքում քայլերի, ինչպես նաև պատվաստման և կորոնավիրուսի վերաբերյալ այլ թեմաներով: Միակ պոլիկլինիկան, որտեղ այդպիսի պաստառներ չկային, դիտարկման պահին նոր էր տեղափոխվել նոր տարածք:

Ուսումնասիրված պոլիկլինիկաների 82,4%-ն ուներ այցելուների հերթագրման որևէ համակարգ առնվազն մեկ բժշկական ծառայության համար՝ կամ ARMED ծրագրի, կամ հեռախոսագանգերի միջոցով, ընդ որում հերթագրում իրականացվում էր Երևանի բոլոր պոլիկլինիկաներում և մարզային պոլիկլինիկաների 71,4%-ում:

Պոլիկլինիկաների 82,9 %-ի մոտ հատակին կային հերթի համար նախատեսված գծանշումների առկայություն, սակայն որոշ դեպքերում դրանք նպատակին չէին ծառայում: Այսինքն, հաճախ, այդ գծանշումների հեռավորությունը միմյանցից 1 մետրից պակաս էր, ինչը գծանմուշներին հետևելու դեպքում անգամ, չէր կարող այցելուների միջև ապահովել պատշաճ հեռավորություն:

Ըստ բոլոր մասնակիցների (պոլ. ղեկավար անձ, ՎՎԿ պատասխանատու)՝ սպասասրահներում նստարանների դասավորությունը ապահովում էր այցելուների միջև պատշաճ հեռավորություն, սակայն ըստ դիտարկման, վերջինս միայն 48,6 %-ի մոտ էր ապահովված:

4. Այցելուների և բուժաշխատողների վարքագիծը

Դիտարկված պոլիկլինիկաների միայն 25,7 %-ում էր այցելուների միջև պատշաճ հեռավորություն պահվում, և բոլոր այդպիսի դեպքերում պոլիկլինիկայում այցելուների ընդհանուր թիվը խիստ քիչ էր:

Այցելուները չէին հետևում շնչառական և ձեռքերի հիգիենային: Մասնավորապես՝ դիտարկված բոլոր պոլիկլինիկաներ մուտք գործող դիտարկված 672 այցելուներից միայն 50-ն էին (7,5%) մուտքի մոտ ախտահանում ձեռքերը, ընդ որում մեկ պոլիկլինիկայում դա բուժքրոջ կողմից պարտադրվում էր բոլոր այցելուներին:

Դիտարկված բոլոր պոլիկլինիկաների սպասասրահներում ընդհանուր առմամբ ներկա 1352 այցելուներից միայն 498-ն էին պատշաճ դիմակ կրում (36,9%-ը):

Շնչառական հիգիենայի պատկերը քիչ էր տարբերվում նաև բուժաշխատողների մոտ. 361 դիտարկված բուժաշխատողներից միայն 144-ն էին կրում դիմակ (39,9%-ը), Երևանում դիտարկված 156 բուժանձնակազմի ներկայացուցչից 78-ը (50%-ը), իսկ մարզերում՝ 205-ից 66-ը (32.1%):

5. Այցերի վերահսկում

Դիտարկված պոլիկլինիկաների 68,6 %-ում մուտքի մոտ կար նշանակված աշխատակից, սակայն պոլիկլինիկաների միայն 51,4 %-ում էր իրականացվում այցելուների ջերմաչափում: Պոլիկլինիկաների 62,5 %-ում մուտքի մոտ այցելուներին բանավոր նախազգուշացում/ հրահանգ էր արվում դիմակ կրելու մասին:

Պոլիկլինիկաների 94,3 %-ում իրականացվում էր աշխատակազմի ջերմաչափում և գրանցում այդ տվյալների մատյանում:

Մուտքի մոտ այցելուներին իրենց ախտանշանների մասին հարցում էին միայն 2 պոլիկլինիկայում: Միայն 2 պոլիկլինիկայում էին մուտքի մոտ այցելուների տվյալները գրանցվում՝ երկու դեպքում էլ ոչ բոլորինը:

6. Անհատական պաշտպանիչ միջոցներով (ԱՊՄ) և այլ սարքավորումներով ապահովվածություն և դրանց անհրաժեշտություն

ԱՊՄ միջոցներով ապահովվածության և դրանց բավարար քանակի վերաբերյալ տեղեկությունը նշված հաստատությունների ղեկավար անձանց/ ՎՎԿ պատասխանատուների կողմից ներկայացված է աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1. ԱՊՄ միջոցներով ապահովվածության և դրանց բավարար քանակի վերաբերյալ տեղեկություն ըստ բուժհաստատության ղեկավարների/ՎՎԿ պատասխանատուների

Տեսակ	% հասանելի է	% Բավարար քանակով
Պաշտպանիչ գոգնոց	97	82
Բժշկական դիմակ	100	86
Ձեռնոց	100	86
Պաշտպանիչ ակնոց	97	86
Դեմքի պաշտպանիչ վահան	100	86
Ռեսպիրատոր դիմակ (N95 or FFP2)	77	67

ԱՊՄ և այլ անհրաժեշտ միջոցներով ապահովվածության և դրանց բավարար քանակի վերաբերյալ տեղեկությունը նշված ընտանեկան բժիշկների/թերապևտների կողմից ներկայացված է աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2. ԱՊՄ և այլ անհրաժեշտ միջոցներով ապահովվածության և դրանց բավարար քանակի վերաբերյալ տեղեկությունը ըստ ընտանեկան բժիշկների/թերապևտների

Տեսակ	~% հասանելի է	~% Բավարար քանակով
Հեռահար ջերմաչափ	86	75
Թվային ջերմաչափ	37	96
Պուլսօքսիմետր	97	88
Ստետոսկոպ	99	90
Թթվածնային սարքեր	11	88
Պաշտպանիչ գոգնոց	99	91
Բժշկական դիմակ	97	91

Ձեռնոց	94	96
Պաշտպանիչ ակնոց	77	96
Դեմքի պաշտպանիչ վահան	96	94
Ռեսպիրատոր դիմակ (N95 or FFP2)	54	76

Մասնակիցների կողմից նշված սարքավորումների կամ այլ միջոցների անհրաժեշտությունը ամփոփված է աղյուսակ 3-ում.

Աղյուսակ 3. Մասնակիցների կողմից նշված անհրաժեշտ սարքավորումների և այլ միջոցների

Տեսակ	% նշված պոլիկլինիկաների ղեկավար անձանց/ ՎՎԿ պատասխանատուների կողմից	% նշված ընտանեկան բժիշկների/ թերապևտների կողմից
Ռենտգեն	35	18
Համակարգչային շերտագրություն	12	22
Չերմաչափեր	9	-
Լաբորատոր թեստեր (կոագուլոգրամա, ֆիբրինոգեն, D-dimer, ֆերիտին և այլն)	9	16
Թթվածնային սարքեր	-	24
Տրանսպորտ	-	15
Բարելավված կազմակերպում	-	17
Այլ	59*	47**

*Ղեկավար անձանց/ՎՎԿ պատասխանատուների կողմից նշված այլ կարիքները ներառում էին արմունկով կառավարվող ախտահանիչ անոթներ, արմունկով բացվող ջրի ծորակներ, ախտահանող սարքավորումներ գոլորշու միջոցով ախտահանում, շենքային պայմանների բարելավում, զուգարանների վերանորոգում, ախտահանող դռներ, բախիլների սարք, անջրանցիկ պաշտպանիչ գոգնոցներ, թթվածնային սարքեր, ֆյուրոգրաֆիա, ախտահանող լամպեր, առանց ձեռքի հպման բացվող աղբամաններ, տոնոմետրեր, դասընթացներ և հասանելի խորհրդատվություն COVID-19-ի բուժման վերաբերյալ, համաճարակաբանի ծառայություն:

**Ընտանեկան բժիշկների/ թերապևտների կողմից նշված այլ կարիքներ ներառում են օդորակիչներ, ավելի փորձառու գործընկերների մասնագիտական խորհրդատվություն, հաճախակի թարմացվող ուղեցույցների առկայություն, համակարգիչներ, էլեմենտներ պուլս-օքսիմետրերի համար (ներառյալ հիվանդների համար), լրացուցիչ վարձատրություն, ստետոսկոպներ, տոնոմետրեր, թղթե անձեռոցիկներ, ԱՊՄ, դեմքի պաշտպանիչ վահաններ, հակամարմինների թեստեր, ուլտրաձայնային սարք (ներառյալ դուպլեքս և դոպլեր հետազոտություններ և թոքերի սոնոգրաֆիա), թթվածնային սենյակներ, հեռահար ջերմաչափեր, պոլիկլինիկայից դուրս (օրինակ՝ տանից) ARMED համակարգին հասանելիություն, էլեկտրասրտագիր: